Ա՛ս խօսքերէս յայտնի կ՚իմացուի որ ամենահարկաւոր բան է մասնաւոր փոյթ մը ունենալ ընդհանուր մեր ազգին կրթութեանը վրայ, որպէս զի իր ջանքը պտղաբեր ըլլայ, իր յառաջադիմութեան հիմը հաստատուն ըլլայ, ու իր յոյսը՝ ակնկալութիւնը շատ հեռու չմնայ։ Այրանի՛ մեր օրագրիս՝ թէ որ աս փոյթը արթընցընելու ու վառ պահելու պարտքը աղէկ կատարէ։

Հ. Գ. ԱՅՎ.

Մոնթիոնի վարձատրութիւնը։

ՕՐԱԳՐԱՑ լուրերուն մէջ չկայ մէկ լուր մը որ այնչափ օգտակար ու այնչափ սիրելի ըլլայ բարեսիրաց, ինչպէս դիւցազնական առաքինութեց լուրերը։ Այսպիսի լուր մը ա՛լ աւելի զօրաւոր ազդեցութիւն կ՚ունենայ լսողին վրայ՝ երբոր գիտնայ թէ անոր ստոյգ ըլլալուն վրայ ամենևին տարակոյս չկայ։ Այս ահա ասանկ է Մոնթիոնի վարձատրութեան լուրն ալ, որ եղեր է նաև անցած ամսուն 11ին։ Ա՛ս Մոնթիոնի վարձատրութէ ինչ բանի համար ըլլալը ուրիշ ատեն պատմեր ենք՝. բայց միշտ սիրելի է յիշելը թէ որչափ գովելի բան է, որ Պաղդիոյ Ճեմարանին պէս իմաստուն ու հռչակաւոր ժողով մը հասուն քննութեամբ ստուգելէն ետև՝ հրապարակաւ կը վարձատրէ այնպիսի առաքինութիւններ, որ թէպէտ բուն յաւիտենական վարձքերնին Աստուծմէ պիտի առնեն, բայց մարդկանց գովեստին ու վարձատրութեանն ալ մասնաւոր կերպով արժանի են։

Ա՛ս տարուան վարձատրուողներուն մէջ երևելի է Յովհաննա Լուիկան անունով կինը որ 3000 ֆրանք առաւ Ճեմարանէն իր դիւցազնական առաքինութեանը համար։ Ա՛սիկայ 25 տարի առաջ Ալէն-Ալերվան քաղաքը բարեպաշտ տնուորի մը քով աղախին է եղեր. 1839ին ասոր տիկինը կը մեռնի, ինքն ալ միայակ չմնալու համար, մանաւանդ թէ իրմէ աւելի օգնութեան կարօտ եղողները միայակ ու անօգնական չձգելու համար, քովը կ՚առնէ մէկ պառաւ մը կոյր՝ Հիւանդ՝ ողորմելի, որ իր քրոջը մեռնելովը երեսի վրայ մնացեր է եղեր։ Այիչ ատենէն ուրիշ պառաւ աղախնի մըն ալ տերերը կը մեռնին, ու անտուն անտէր կը մնայ. Յովհաննան ասիկայ ալ իր տնակը կ՚առնէ. անոր վրայ ուրիշ քանի մը խեղճեր ալ կը ժողվէ ասդիէն անդիէն. իր տունը պզտիկ աղքատանոց մը կը դառնայ, այնպէս որ 1841ին պէտք կ՚ըլլայ որ ուրիշ մեծկակ տուն մը վարձէ։ Ա՛յրան ամիս մը չանցնիր՝ ան տունն ալ կը լեցուի, վասն զի աղքատները 12 կ՚ըլլան. ան ատեն քաղաքին մէջ աս բանիս ձայնը կը տարածուի, հարուստներուն ականջը կը հասնի, կը սկսին վրան խօսիլ՝ գովել՝ զարմանալ. կ՚երթան անձամբ կը տեսնեն, կը զմայլին ան կնկանը բռնած Ճամբուն ու կառավարութեանը վրայ, և թէ ինչպէս ինքը իր աշխատանքովն ու ասդիէն անդիէն ողորմութիւն ժողվելով՝ բոլոր ան աղքատները գոհ կ՚ընէ. սրտերնին կը շարժի, ու աս բարերարութէ մենք ալ մասնակից ըլլանք ըսելով աւելի մեծ տուն մը կը գտնեն՝ կուտան Յովհաննային. բայց գիտցիր որ ասկէ աւելի օգնութի չենք կրնար ընել քեզի կ՚ըսեն, ապրուստը դուն պիտի մտածես։ "Ադուք տունը տուէք ու հոգ մ՚ընէք, կ՚ըսէ առաքինի կինը. Ա՛ս տուած որ աղքատներով լեցընէ տունը, անոնց հացն ալ ինքը կը հոգայ"։ Ա՛յրան քիչ ատեն կ՚անցնի, 12ը 20 կ՚ըլլայ. իսկ հիմա 75 հոգի կայ Յովհաննային աղքատանոցը, ամէնքն ալ ծեր կամ հիւանդ, կաղ, կոյր, անկար ու օրուան հացին կարօտ։ Այրեն բարի օրինակէն շարժած՝ ուրիշ իրեք կանայք ալ գնացեր են իրեն օգնա-

։ Հատ. Գ. էջ 208։

կան . բժիշկ մը կայ որ ձրի կ'երթայ հիւանդները հոգալու . տան մէջ եղած աղքատներուն աշխատանքը կամաւոր է . Յովհաննան ամէն օր սապատը՝ ձեռքը՝ կ'ելլէ մէյմը կը պտըտի քաղաքը, ու լեցուն ձեռքով տուն կը դառնայ՝ իր աղքատները կը կերակրէ : Ահա այսպիսի վեհանձնական բարերարութեանը համար Գաղղիոյ Ճեմարանը տուեր է Յովհաննային վարձ 3000 ֆրանք, որ կ'ընէ գրեթէ 15000 ղրուշ : Այսպէս ամէն լսող ու տեսնող կը զմայլի ու կը գովէ աս գեղեցիկ առաքինութիւնը . բայց արդեօք ո՞վ կրնայ պատմել ան առաքինի կնոջ խնամքը վայելող աղքատներուն շնորհակալութիւնը, երախտագիտութիւնը, և սրտանց օրհնէնքն ու աղօթքները որ կ'ընեն իրենց բարերարին համար :

Աս օրհնէնքին ճաշակը սեպուի հետագայ ոտանաւորը, որ ողորմած ու բարերար անձանց խրախոյս մըն ալ կրնայ ըլլալ :

ՅԵՏ տեառնէն չափեալ երկիրս ընդհանուր
Արփիափայլ ջրաբաշխ ուրեք վայր յուռթի,
Ի սաղարթուց մերկ ծարաւուտ գետ այլուր,
Բայց եւանէ ամպ յանապատն անջրդի,
Փրթթի երէզն և ծիծաղի ամային,
Ցամք նոյն թռչին խունկք 'ի ծաղկանց իւրածին :

Ջանարգասի առեալ բաղդին ըղձիճակ
Կրկին պանդուխտք տնանկքս 'ի հովտի կենցաղոյս,
Սով, մերկութիւն, տարերք զինին դըժընդակ,
Ընդ մր չցխտեմք դառնալ կամ իբրը տալ խոյս .
Արտօսր 'ի վեր զաչկունս մըղէ, վիշտ զոգիս . . .
Եւ տէր շնորհէ բարերարս մեզ հովանիս :

Ո՜վ վերնախնամ ծածկեալ գըթոյն ձեռք յայտնիք,
Արարչագործ աստուածք եղբարց ձեր այցող,
Ջհէգ մարդկութեամբ հանգոյն ամպոց ծածանիք
Զյեղակարծուցն 'ի նա տեղալ ջեր և ցօղ .
Յերկրի ճեմեալք՝ երկնից գանձուց տայք հրաման.
Զոր մեզ թափէք՝ նոյնք անկորուստ ձեզ անդ կան :

Ջահք անեղին լուցեալք կենաց մեր 'ի լոյս,
Ձեօք՝ ոչ արփին իմաստութեան թագչի՝ մէնջ .
Ձեօք՝ ոչ մեզ հուպ դամբանն ունի զխանձարուրս .
Մեք զամանոր վայելից ձեօք առնումք տենչ,
Եւ աչքյարտօսր և սիրտք անձկաւ 'ի գործոլ
Առ տէր դառնան ուառ ձեզ տարեաւս այս նորով.

Տո՛ւր, հայր, տնանկաց և ճոխից, վարձս ը վարձուց
Ոյց բարերար բնութեանդ լինին հաղորդք աստ .
Կեցցեն պարգևք նոցուն 'ի դարըս դարուց,
Հիմունքն 'ի մեր սիրտ՝ գլուխն 'ի քոյդ առագաստ .
Ցաւխտենից լերանցդ աղբերք գերակայ
Ցիւղ և 'ի մեղս արբեցուսցեն զճեա նոցա :

Ցաւուրյոր բաղդք և բարձք լինին զուգահարթ,
Մերկ մանկըտիս, հաստկն անկար անտերունչ
Հանդխասցին պըճնեալք 'ի տուրս նոցա զուարթ,
Զայս արքայից փառաց առեալ ջերմ մրմունջ .
« Տե՛ս զոր յերկրի քեզ ձօնեցին 'ի մեր ձեռս,
Դարձո՛ նոցա, տո՛ւր տոկոսիս և զեթերս » :

Հ . Ղ . Մ

1 ՍԷՖԷՐ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ատտալիա կամ Ադալիա :

ԱՐԵՒԵԼՔԻ քաղաքներուն մէջ խիստ հին ու անուանի քաղաքներէն մէկն է ասիկայ . բայց բուն հին անունը ինչ ըլլալը յայտնի չէ . ոմանք կ'ըսեն թէ աս ան Ատտալիա կամ Ատալիա և կամ Ատտալիա քաղաքն է որ Պտղոմէոս աշխարհագիրը կը յիշէ իբրև Պամփիլեան Գաղատիոյ գլխաւոր քաղաք, ու ժողովոց պատմութիւններուն մէջ կը տեսնենք որ Քրիստոսի 500 թուականէն առաջ ու ետև Ատտալիայի եպիսկոպոսներ կը յիշուին սուրբ ժողովներու մէջ . անով թերևս Յունաց մէջ ու մեր մէջ ալ սովորութիւն եղած է Ատտալիա ըսելը, թէպէտ և ոչ աս անունը ստոյգ է և ոչ Ադալիա ըսուելուն պատճառը . միայն թէ կրնայ ըլլալ որ Ադալիա բառը Ատտալիա բառին աւրուածն ըլլայ :

Աս քաղաքը շատ զարմանալի դիրք մը ունի . հեռուէն տեսած ատենդ կարծես թէ պատկերքի մէջ քաշուած տեսարան մըն է, բայց քովը որ մօտիկնաս՝ կը տեսնես որ ձորի մէջ շինած է՝ չորս դին բարձր ու ապառաժ լեռներով պատած . տներն ու փողոցներն ալ լեռներուն ոտքէն գրեթէ ինչուան անոնց գագաթը կ'ելլեն, անոր համար օտարականք աս փողոցնե-